Արձանագրություն N 4
« ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/10Շ » ծածկագրով հրատապ բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«02» օգոստոս2019թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Գասպարյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Հարությունյանը,

Ն. Մեսրոպյանը

Լ. Ոսկանյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Բաղդասարյանը

Բացակայում է հանձնաժողովի անդամ՝ Ա. Պապյանը,

1. **Հրատապ բաց մրցույթ ընթացակարգի բողոքի կատարման և առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու վերաբերյալ**

Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից 26.07.2019թ. թիվ ԳԲՔԱ-Լ0-2019/51 կայացրած որոշումը, գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Դադարեցնել 25.06.2019թ. թիվ 2 արձանագրությամբ կայացված <<Մերձմոսկովյան>> ԲԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու ու մերժելու, <<Տեր-Հայրապետյան Շին>> ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումները ինչպես նաև 01.07.2019թ. թիվ 3 արձանագրությամբ կայացված <<Տեր-Հայրապետյան Շին>> ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:
2. <<Մերձմոսկովյան>> ԲԲԸ-ի հայտը գնահատել հրավերի պահանջներին համապատասխանող:
3. 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Մերձմոսկովյան>> ԲԲԸ-ին:

Scanned by CamScanner

4. Առաջարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին (<<Մերձմոսկովյան>> ԲԲԸ-ին) երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:
5. Հարկային հարցում ներկայացնել << պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի (<<Մերձմոսկովյան>> ԲԲԸ-ի) ՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:
6. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 12:30-ին, << ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, << բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, 2-րդ հարկ, N 208 սենյակ հասցեում

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Կ. Գասպարյան

Անդամներ՝ Լ. Ոսկանյանը

Լ. Հարությունյան

Ն.Մեսրոպյան

Քարտուղար՝ Ա. Բաղդասարյան

Scanned by CamScanner